ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 18
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

31.10.2018թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2018 թվականի փետրվարի 2-ի N 30-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի (հանձնաժողովի նախագահ), ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի առաջատար մասնագետ Արմեն Շահվերդյանի, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջին կարգի մասնագետ Անի Ղազարյանի, քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ Արման Մխիթարյանի, սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետ Իրինա Գրիգորյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Սպարտակ Ղուբաթյանի, մարզպետարանի աշխատակից՝ համայնքների գլխավոր հատակագծերի և գոտիավորման սխեմաների նախագծերի կազմման աշխատանքների համակարգող Գագիկ Հախինյանի, զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի առաջատար մասնագետ Ժիրայր Բասմաջյանի, բնապահպանության բաժնի պետ Արտակ Դեմիրչյանի, բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանի, կրթության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարոյանի, մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ Միեր Մելիքյանի և տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջին կարգի մասնագետ Հարություն Ասլանյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման, ՔԿԱԳ, կապի և առողջապահության, քաղաքաշինության, պաշտպանության, սոցիալական պաշտպանության, կրթության, մշակույթի, առևտրի և ծառայությունների, բնության և շրջակա միջավայրի պահպանության, ընդերքօգտագործման և տրանսպորտի ոլորտներում, ինչպես նաև համայնքային ենթակայության 1 նախադպրոցական ուսումնական հաստատությունում:

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:
2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Օձուն համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Արմեն Շահվերդյան _____

Արտավազդ Բեջանյան _____

Էդգար Հախվերդյան _____

Իրինա Գրիգորյան _____

Սպարտակ Ղուբաթյան _____

Գագիկ Հախինյան _____

Անի Ղազարյան _____

Արման Մխիթարյան _____

Միեր Մելիքյան _____

Արտակ Դեմիրչյան _____

Սամվել Խառատյան _____

Ժիրայր Բասմաջյան _____

Անահիտ Բարոյան _____

Հարություն Ասլանյան _____

Համայնքի ղեկավար՝
Արսեն Տիտանյան _____